ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դոկտոր, պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Նալբանդյան փողոց հ. 9 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դոկտոր, պրոֆեսոր, պատմաբան, հայագետ Լենդրուշ Խուրշուդյանը ծնվել է 1927թ.: 1952-1955թթ. ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 1956թ. պաշտպանել է թեկնածուական, 1966թ.՝ դոկտորական ատենախոսություն:

1980թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1990թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1956-1974թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում, 1974-1977թթ.՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում:

1977-1999թթ. եղել է Երևանի համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ: Նա նախաձեռնել է հայ ժողովրդի պատմության ուսումնական քարտեզների (25 քարտեզ) ստեղծման և հրատարակման աշխատանքները:

Լենդրուշ Խուրշուդյանը հեղինակ է 100 գիտական աշխատությունների և 15 գրքի:

Նա գործուն մասնակցություն է ունեցել «Հայկական սովետական հանրագիտարանի», «Հայկական համառոտ հանրագիտարանի», «Հայկական հարց հանրագիտարանի» ստեղծման գործին, գլխավորել է Պատմաբանների հայկական ընկերությունը: Նրա մի շարք աշխատություններ լույս են տեսել արտասահմանում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է ութ թեկնածուական ատենախոսություն:

Լենդրուշ Խուրշուդյանը, իր ուսումնասիրությունների արդյունքներով և գիտական զեկուցումներով, հանդես է եկել Երևանում, Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Թբիլիսիում, Տաշքենդում, Ուլյանովսկում, Ռիգայում և այլուր:

Նա հայ պատմագրությունը ներկայացրել է միջազգային բազմաթիվ գիտաժողովներում (Բոստոն, Լոս Անջելես, Թեհրան, Բեյրութ, Բուենոս Այրես և այլն):

Ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը վախճանվել է 1999թ. հունիսի 7-ին Երևանում:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դոկտոր, պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Նալբանդյան փողոց հ. 9 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդ. Մինասյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լենդրուշ Խուրշուդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լենդրուշ Խուրշուդյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ